



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

8 ապրիլի 2026 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան հետևյալ կազմով՝ նախագահող դատավոր՝ Դատարանի նախագահ Ա.Ա. Դրոնովի, զեկուցող դատավոր՝ Ե.Ժ. Իսմայիլովի, դատավորներ՝ Է.Վ. Հայրիյանի, Դ.Պ. Ալեքսանդրովի, Կ.Կ. Ջունուշյանի, Ա.Ա. Զաբարայի, Մ.Տ. Կայիպովի, Ա.Բ. Կիշկեմբաևի, Ն.Վ. Պավլովայի, Ա.Գ. Թունյանի,

դատական նիստի քարտուղար՝ Բ.Մ. Այսաուտովի,

հետազոտելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին,

առաջնորդվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 2-րդ, 42-րդ, 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-րդ, 96-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 72-րդ, 85-րդ հոդվածներով՝

տրամադրում է խորհրդատվական եզրակացությունը՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2025 թվականի հուլիսի 21-ի թիվ 69 որոշման դրույթների պարզաբանման մասին

Ղազախստանի Հանրապետության առևտրի եւ ինտեգրման նախարարության
դիմումի համաձայն:

I. Դիմողի հարցերը

1. Ղազախստանի Հանրապետությունը՝ ի դեմս Ղազախստանի
Հանրապետության առևտրի եւ ինտեգրման նախարարության (այսուհետ՝ դիմող),
դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝
«Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին»
2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի (այսուհետ՝ ԵԱՏՄ ՄՕ-ի մասին
պայմանագիր) եւ որոշակի ապրանքների նկատմամբ ռիսկերի ոլորտների
սահմանմանը վերաբերող Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի
2025 թվականի հուլիսի 21-ի թիվ 69 որոշման (այսուհետ՝ թիվ 69 Որոշում)
դրույթները պարզաբանելու դիմումով:

Դիմողը նշում է, որ թիվ 69 Որոշումն ընդունվել է Եվրասիական տնտեսական
միության մաքսային օրենսգրքի (ԵԱՏՄ ՄՕ-ի մասին պայմանագրի թիվ 1
հավելված, այսուհետ՝ ԵԱՏՄ ՄՕ) 377-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, որը
նախատեսում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝
Հանձնաժողով, ԵՏՀ) իրավունքը՝ որոշելու ռիսկերի այն ոլորտները, որոնց
առնչությամբ մաքսային մարմիններին հանձնարարվում է հաստատել ռիսկերի
պրոֆիլներ եւ կիրառել ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցներ:

Թիվ 69 Որոշման մեջ Հանձնաժողովը սահմանել է ռիսկերի ոլորտները
Հանձնաժողովի նշած ապրանքների առանձին խմբերի նկատմամբ, նաեւ այն
պարունակվում է դիմում անդամ պետությունների կառավարություններին՝
ռիսկերի պրոֆիլների հաստատման դեպքում ռիսկերի որոշակի ոլորտների
վերաբերյալ ԵՏՀ-ի տեղեկացումն ապահովելու խնդրանքով:

ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 1-ին կետը նկարագրում է ռիսկերի կառավարման
բուն գործընթացը, որը, համաձայն ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 4-րդ կետի,
իրականացվում է մաքսային մարմինների կողմից՝ մաքսային կարգավորման

մասին անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան: Ազգային իրավունքին այդ հոլման առկայությունը, ըստ դիմողի, ինստիտուցիոնալ առումով ամրագրում է ազգային մարմինների արտոնությունը ռիսկերի կառավարման համակարգի կիրառման հարցերում, ինչի կապակցությամբ պարզ չէ թիվ 69 Որոշման իրավական կարգավիճակը, որը պարունակում է միաժամանակ թե՛ իմպերատիվ, թե՛ խորհրդատվական բնույթի ցուցումներ:

2. Այսպիսով, հաշվի առնելով 2026 թվականի փետրվարի 20-ին ներկայացված ճշգրտումը, դիմողը խնդրում է Դատարանին տրամադրել խորհրդատվական եզրակացություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝

- պարտադիր, թե՞ խորհրդատվական բնույթ ունի Հանձնաժողովի՝ ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 6-րդ կետով ամրագրված իրավունքը.
- Հանձնաժողովի ո՞ր տեսակի փաստաթղթի ձևով է ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսվում սահմանել ռիսկերի ոլորտները.
- արդյո՞ք թիվ 69 Որոշումը ենթակա է պարտադիր կատարման՝ հաշվի առնելով դրա 2-րդ կետի պահանջները:

II. Ընթացակարգը Դատարանում

3. Դատարանի մեծ կոլեգիայի 2025 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ՝ դիմումն ընդունվել է վարույթ: Սահմանափակվել է գործի նյութերի հրապարակայնությունը՝ թիվ 69 Որոշման մեջ եւ այդ որոշման նախապատրաստմանն ու ընդունմանը վերաբերող նյութերում պարունակվող սահմանափակ տարածման տեղեկատվության մասով:

4. Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 2 հավելված) 68-րդ կետի համաձայն՝ պարզաբանման վերաբերյալ գործերի քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101

որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգով (այսուհետ համապատասխանաբար՝ Ստատուտ, Պայմանագիր, Կանոնակարգ):

5. Կանոնակարգի 75-րդ հոդվածին համապատասխան՝ գործը քննության նախապատրաստելու շրջանակներում դիմողի առաջադրած հարցերի վերաբերյալ հարցվել են լրացուցիչ տեղեկություններ, իրավասու պետական մարմինների, Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն, ԵԱՏՄ) անդամ պետությունների գիտական հաստատությունների, ինչպես նաև Հանձնաժողովի կարծիքներ:

Համապատասխան տեղեկատվությունը եւ նյութերը Դատարանին են տրամադրել դիմողը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեն, Բելառուսի պետական համալսարանը, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեն, Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարության Օրենսդրության եւ իրավական տեղեկատվության ինստիտուտը, Ղրղզստանի Հանրապետության նախարարների կաբինետին առընթեր պետական մաքսային ծառայությունը, Ղրղզստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունը, Ռուսաստանի Դաշնության կառավարությանն առընթեր Օրենսդրության եւ համեմատական իրավագիտության ինստիտուտը:

Հանձնաժողովը Դատարան է ներկայացրել նախապատրաստական նյութերը, որոնք հիմք են հանդիսացել թիվ 69 Որոշման ընդունման համար, եւ դիմումի վերաբերյալ գրավոր դիրքորոշումը:

III. Դատարանի եզրահանգումները

6. Ստատուտի 2-րդ կետին համապատասխան՝ Դատարանի գործունեության նպատակը, սույն Ստատուտի դրույթների համաձայն,

Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի, երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերի, եւ Միության մարմինների որոշումների միատեսակ կիրառությունն ապահովելն է անդամ պետությունների կողմից:

7. Դատարանը, Ստատուտի 46-րդ եւ 50-րդ կետերին համապատասխան, անդամ պետության կամ Միության մարմնի դիմումի համաձայն, հիմնվելով նաեւ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքների եւ նորմերի վրա, իրականացնում է Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների դրույթների պարզաբանումը:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաեւ պայմանագրի օբյեկտի եւ նպատակների լույսի ներքո:

Դատարանը քննում է հարցերն իր իրավասության սահմաններում եւ Միության մարմիններին չի օժտում լրացուցիչ իրավասությամբ, բացի նրանից, որը ուղղակիորեն նախատեսված է Պայմանագրով եւ (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով (Ստատուտի 41-րդ, 42-րդ կետեր):

8. Պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Միության շրջանակներում ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի շարժի ազատությունը, համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը տնտեսության այն ճյուղերում, որոնք սահմանված են Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով:

Պայմանագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ Միությունն իր գործունեությունն իրականացնում է անդամ պետությունների կողմից Պայմանագրին համապատասխան իրեն վերապահված իրավասության սահմաններում,

մասնավորապես՝ փոխշահավետ համագործակցության ապահովման, Կողմերի իրավահավասարության եւ ազգային շահերը հաշվի առնելու, անցումային ժամանակահատվածների ավարտից հետո Մաքսային միության՝ առանց բացառումների եւ սահմանափակումների գործելու սկզբունքների հիման վրա:

Տվյալ սկզբունքները մտնում են իրավական հիմքի մեջ՝ Պայմանագրի 3-րդ հոդվածում նշված Միության գործունեության այլ հիմնարար սկզբունքների հետ մեկտեղ: Դրանց թվին է դասվում նաեւ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքների հարգումը: Ընդ որում, Պայմանագրի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքը, որի համաձայն՝ անդամ պետությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում Միության կողմից իր գործառույթները կատարելու համար եւ ձեռնպահ են մնում այնպիսի միջոցներից, որոնք կարող են վտանգել Միության նպատակների իրագործումը, սահմանում է անդամ պետությունների թույլատրելի վարքագծի շրջանակները եւ պետություններին կողմնորոշում է դեպի տվյալ միջպետական միավորման նպատակների իրագործում:

Դատարանի մեծ կոլեգիան նախկինում արդեն ուշադրություն է դարձրել այն բանին, որ Պայմանագիրը (այդ թվում՝ դրա նպատակները եւ սկզբունքները) ԵԱՀԿ իրավունքի համակարգի ձեւավորող տարր է, պայմանավորում է Միության շրջանակներում անդամ պետությունների այլ միջազգային պարտավորությունների բովանդակությունը եւ ծավալը (Դատարանի 2026 թվականի մարտի 2-ի թիվ R-7/25 գործով խորհրդատվական եզրակացության 9-րդ կետ), ինչպես նաեւ նշել է Պայմանագրի համապատասխան նորմերի մեկնաբանման եւ կիրառման կարելիությունը Պայմանագրի I բաժնում ամրագրված սկզբունքների եւ նորմերի հետ (մասնավորապես՝ 1-ին, 3-6-րդ հոդվածներ) դրանց անխզելի փոխկապակցվածության մեջ, որոնք հիմնարար նշանակություն ունեն Պայմանագրի եւ դրա իրագործման համար (Դատարանի 2025 թվականի ապրիլի 7-ի թիվ R-5/24 գործով խորհրդատվական եզրակացության 6-րդ կետ):

9. Պայմանագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ Մաքսային միությունն անդամ պետությունների առևտրատնտեսական ինտեգրման ձեւ է, որով նախատեսվում է միասնական մաքսային տարածք, որի սահմաններում փոխադարձ առևտրի մեջ չեն կիրառվում մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր եւ վճարներ), ոչ սակագնային կարգավորման միջոցներ, հատուկ պաշտպանական, հակագնացման ու փոխհատուցման միջոցներ: Պայմանագրի 25-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետին համապատասխան՝ Մաքսային միության շրջանակներում գործում են Միասնական մաքսային սակագինը եւ երրորդ կողմերի հետ ապրանքների արտաքին առևտրի կարգավորման այլ միասնական միջոցներ:

10. Պայմանագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունների կողմից սահմանված՝ Պայմանագրով նախատեսված ոլորտներում անդամ պետություններն իրականացում են միասնական քաղաքականություն, որը ենթադրում է միասնականացված իրավական կարգավորման կիրառում, այդ թվում՝ Միության մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակներում կայացված որոշումների հիման վրա:

Մաքսային միության շրջանակներում միասնական մաքսային կարգավորման իրականացումը, Պայմանագրի 25-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետին համապատասխան, Մաքսային միության գործունեության սկզբունքներից մեկն է:

Պայմանագրի 32-րդ հոդվածի համաձայն՝ Միությունում միասնական մաքսային կարգավորումն իրականացվում է ԵԱՏՄ ՄՕ-ին եւ Միության իրավունքը կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերին ու ակտերին (այսուհետ՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրեր եւ ակտեր) համապատասխան, ինչպես նաեւ Պայմանագրի դրույթներին համապատասխան:

Այսպիսով, Պայմանագիրը սահմանում է ԵԱՏՄ ՄՕ-ն որպես նորմերի հիմնական աղբյուր, որոնց համապատասխան իրականացվում է Միությունում միասնական մաքսային կարգավորումը:

11. ԵԱՏՄ ՄՕ 1-ին հոդվածին համապատասխան՝ Միությունում իրականացվող միասնական մաքսային կարգավորումը ներառում է Միության

մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման, Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս դրանց գտնվելու եւ օգտագործման կարգի ու պայմանների, Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման, Միության մաքսային տարածքից դրանց մեկնման, ապրանքների ժամանակավոր պահպանման, դրանց մաքսային հայտարարագրման ու բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների, այլ մաքսային գործառնությունների կատարման կարգի, մաքսային վճարների, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի վճարման ու մաքսային հսկողության անցկացման կարգի սահմանումը, ինչպես նաեւ մաքսային մարմինների եւ Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքներ իրականացնող անձանց միջեւ իշխանական հարաբերությունների կանոնակարգումը:

Ինչպես նշված է վերելում, Միությունում մաքսային կարգավորումն իրականացվում է մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերին եւ ակտերին, ինչպես նաեւ Պայմանագրին համապատասխան, որի 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն ունի առաջնահերթություն Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի նկատմամբ: ԵԱՏՄ ՄՕ-ի եւ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Միության իրավունքը կազմող այլ միջազգային պայմանագրերի միջեւ հակասություններ ծագելու դեպքում կիրառվում են ԵԱՏՄ ՄՕ-ի դրույթները:

Հաշվի առնելով շարադրվածը՝ Դատարանի մեծ կոլեգիան արձանագրում է, որ ԵԱՏՄ ՄՕ-ն, որպես միջազգային պայմանագիր, մաքսային իրավահարաբերությունների կարգավորման հիմքն է, այդ թվում՝ ռիսկերի կառավարման ոլորտում, եւ դրա դրույթները առաջնահերթություն ունեն մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերի եւ ակտերի նկատմամբ՝ բացի Պայմանագրից:

12. ԵԱՏՄ ՄՕ 2-րդ հոդվածի 1-ին կետում ԵԱՏՄ ՄՕ-ի կիրառման նպատակով ներկայացված են հետեւյալ հասկացությունները՝

մաքսային գործառնություններ՝ գործողություններ, որոնք կատարվում են անձանց եւ մաքսային մարմինների կողմից՝ մաքսային կարգավորման ոլորտին առնչվող միջազգային պայմանագրերին ու ակտերին եւ (կամ) մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան (ենթակետ 37).

մաքսային մարմիններ՝ անդամ պետությունների մաքսային մարմիններ (ենթակետ 38).

մաքսային հսկողություն՝ մաքսային մարմինների կողմից կատարվող գործողությունների ամբողջություն, որոնք ուղղված են մաքսային կարգավորման ոլորտին առնչվող միջազգային պայմանագրերի եւ ակտերի ու մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրության պահպանման ստուգմանը եւ (կամ) ապահովմանը (ենթակետ 41):

13. Մաքսային հսկողություն անցկացնելու վերաբերյալ ընդհանուր դրույթները պարունակվում են ԵԱՏՄ ՄՕ 44-րդ գլխում, որի նորմերի համաձայն (հոդված 310)՝

մաքսային հսկողությունն անցկացվում է մաքսային մարմինների կողմից՝ ԵԱՏՄ ՄՕ-ին համապատասխան.

մաքսային հսկողության ձեւերի եւ (կամ) մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների կիրառմամբ մաքսային հսկողության անցկացման կարգը որոշվում է ԵԱՏՄ ՄՕ-ով, իսկ սույն ԵԱՏՄ ՄՕ-ով չկարգավորված մասով կամ դրանով նախատեսված դեպքերում՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան.

նշված ձեւերի մաքսային հսկողության եւ մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների կիրառման տեխնոլոգիաները (հրահանգները) սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան.

մաքսային հսկողության օբյեկտները, ձեւերը եւ (կամ) մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցներն ընտրելիս կիրառվում է ռիսկերի կառավարման համակարգ՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան.

մաքսային հսկողության ձեւերը եւ (կամ) մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցները մաքսային մարմինների կողմից կարող են կիրառվել անդամ պետության օրենսդրության պահպանումն ապահովելու համար, որը պահպանելու նկատմամբ հսկողությունը վերապահված է այդ անդամ պետության մաքսային մարմիններին, եթե դա սահմանված է անդամ պետությունների օրենսդրությամբ.

մաքսային հսկողության անցկացման ժամանակահատվածները, այդ թվում՝ կախված որոշակի հանգամանքներն ի հայտ գալուց, կարող են սահմանվել անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

14. Այսպիսով, ԵԱՏՄ ՄՕ-ի վերոնշյալ դրույթներով մաքսային հսկողության իրականացման գործառույթները, այդ թվում՝ դրա անցկացման օբյեկտների եւ ձեւերի ընտրությունը՝ մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ռիսկերի կառավարման համակարգի կիրառմամբ, մաքսային հսկողության ձեւերի եւ (կամ) մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների կիրառումը՝ որպես ռիսկերի կառավարման համակարգի մեխանիզմներից մեկը, վերապահված են Միության անդամ պետությունների մաքսային մարմինների լիազորություններին: Մաքսային հսկողության անցկացման կարգը, մաքսային հսկողության ձեւերի եւ մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների կիրառման տեխնոլոգիաները (հրահանգները)՝ ԵԱՏՄ ՄՕ-ով չկարգավորված մասով կամ դրանով նախատեսված դեպքերում, սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

15. Ռիսկերի կառավարման համակարգի կիրառման կարգը կարգավորվում է ԵԱՏՄ ՄՕ-ի «Մաքսային մարմինների կողմից կիրառվող ռիսկերի կառավարման

համակարգը» 50-րդ գլխի նորմերով:

ԵՍՏՄ ՍՕ 376-րդ հոդվածի համաձայն, 50-րդ գլխի նպատակներով, վերլուծվող հարցի առնչությամբ, օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

մաքսային ռիսկ (ռիսկ)՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի եւ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության չպահպանման հավանականությունը.

ռիսկերի կառավարում՝ մաքսային մարմինների համակարգված գործունեություն՝ ուղղված մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի եւ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության չպահպանման հետ կապված իրադարձությունների տեղի ունենալու հավանականության եւ դրանց տեղի ունենալու արդյունքում հնարավոր վնասի նվազեցմանը.

ռիսկի գնահատում՝ գործողություններ, որոնք ուղղված են ռիսկի նույնականացմանը, վերլուծությանը եւ ռիսկի մակարդակի որոշմանը.

ռիսկի նույնականացում՝ գործողություններ, որոնք ուղղված են ռիսկի հայտնաբերմանը, ճանաչմանը եւ նկարագրմանը.

ռիսկի վերլուծություն՝ մաքսային մարմինների մոտ առկա տեղեկատվության օգտագործում՝ ռիսկի ոլորտը եւ ցուցիչները որոշելու համար.

ռիսկի մակարդակ՝ մեծություն, որը բնորոշում է մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի եւ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության չպահպանման հետ կապված իրադարձության տեղի ունենալու հաճախականության եւ նշված իրադարձության տեղի ունենալու արդյունքում հնարավոր հետեւանքների (վնասի) հարաբերակցությունը.

ռիսկի պրոֆիլ՝ ռիսկի ոլորտի, ռիսկի ցուցիչների եւ ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունը.

ռիսկի ոլորտ՝ ռիսկի եւ պայմանների նկարագրությունը, որոնց դեպքում այն առաջանում է.

ռիսկի ցուցիչ՝ հատկանիշ կամ հատկանիշների ամբողջություն, որը թույլ է տալիս ընտրել մաքսային հսկողության օբյեկտը.

ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցներ՝ ԵԱՏՄ ՄՕ-ով նախատեսված՝ մաքսային հսկողության ձեւեր եւ մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցներ, ինչպես նաեւ ԵԱՏՄ ՄՕ-ով եւ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներ, որոնք կիրառվում են ռիսկերի գնահատման հիման վրա:

Մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման գործընթացի կազմակերպման հարցերը կարգավորված են ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածում:

ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 1-ին կետը մաքսային մարմինների կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացի մեջ ներառում է. (1) մաքսային հսկողության օբյեկտների, իրականացված մաքսային գործառնությունների եւ մաքսային հսկողության արդյունքների մասին տեղեկատվության հավաքումը եւ մշակումը. (2) ռիսկի գնահատումը. (3) ռիսկի ցուցիչի նկարագրումը. (4) ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների եւ այդ միջոցների կիրառման կարգի սահմանումը. (5) ռիսկի պրոֆիլների մշակումը եւ հաստատումը. (6) մաքսային հսկողության օբյեկտների ընտրությունը. (7) ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների կիրառումը. (8) ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների կիրառման արդյունքների վերլուծությունը եւ հսկողությունը:

ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետերի համաձայն՝ մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման գործընթացն իրականացվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան: Ռիսկերի պրոֆիլներում ու ցուցիչներում պարունակվող տեղեկատվությունը գաղտնի է եւ ենթակա չէ հրապարակման՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող դեպքերի:

16. Վերոնշյալ դրույթների համակցված ընթերցումը Դատարանի մեծ կոլեգիային թույլ է տալիս եզրահանգել, որ ռիսկերի կառավարման գործընթացը՝ մաքսային հսկողության թվարկված մեխանիզմների կիրառմամբ, իրականացվում է Միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից, որոնց իրավասությանն է վերապահված ռիսկի պրոֆիլների հաստատումը՝ որպես ռիսկերի ոլորտի, ռիսկի ցուցիչների եւ ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների մասին տեղեկությունների ամբողջություն:

Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ ռիսկի ոլորտը սահմանելու համար (ռիսկի եւ այն պայմանների նկարագրությունը, որոնց դեպքում այն առաջանում է) անհրաժեշտ են, մասնավորապես, ռիսկի նույնականացումը (ռիսկի հայտնաբերմանը, ճանաչմանը եւ նկարագրությանն ուղղված գործողություններ), ռիսկի վերլուծությունը (մաքսային մարմիններում առկա տեղեկատվության օգտագործում՝ ռիսկի ոլորտը եւ ցուցիչը սահմանելու համար) եւ ռիսկի մակարդակի որոշումը, որոնք ամբողջության մեջ կազմում են ռիսկի գնահատումը: Մինչդեռ ռիսկի գնահատումը՝ ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի ուժով, վերապահված է անդամ պետությունների մաքսային մարմինների իրավասությանը:

17. Քննարկելով ԵԱՏՄ ՄՕ-ի վերոհիշյալ դրույթները, հաշվի առնելով դիմողի առաջին հարցը՝ Դատարանի մեծ կոլեգիան հիմք է ընդունում Հանձնաժողովի կարգավիճակը՝ որպես Միության մշտապես գործող կարգավորող մարմին (Պայմանագրի 18-րդ հոդվածի 1-ին կետ):

Պայմանագրի 18-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԵՏՀ-ի կարգավիճակը, խնդիրները, գործառույթները, լիազորությունները եւ աշխատանքի կարգը սահմանվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին հիմնադրույթի համաձայն (Պայմանագրի թիվ 1 հավելված, այսուհետ՝ Հանձնաժողովի մասին հիմնադրույթ):

Հանձնաժողովի մասին հիմնադրույթի 3-րդ կետին համապատասխան՝ տվյալ մարմինն իր գործունեությունն իրականացնում է Պայմանագրով եւ Միության

շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված լիազորությունների սահմաններում, այդ թվում՝ մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորման (ենթակետ 1), մաքսային կարգավորման (ենթակետ 2) ոլորտներում:

Հանձնաժողովի գործունեության այս ոլորտները առաջնահերթ են ոչ միայն հենց Հանձնաժողովի համար, այլեւ, ընդհանուր առմամբ՝ ԵԱՏՄ-ի համար՝ որպես տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն: Հենց Մաքսային միության հաջող գործունեությունը եւ դրան հաջորդող Միասնական տնտեսական տարածքի ձեւավորումը, արտաքին առևտրի մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորման, մաքսային, անասնաբուժական, սանիտարական եւ բուսասանիտարական հսկողության միասնական համակարգի ստեղծումն է ապահովում ԵԱՏՄ չորս ազատությունների իրացման պայմանները, որոնք հռչակված են Պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին կետում:

Նման եզրակացությունը լիովին համապատասխանում է նաեւ «Եվրասիական տնտեսական ինտեգրման մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի հռչակագրի դրույթներին, որից ելնելով, պետությունների կողմից հիմնադրվել է Եվրասիական տնտեսական միությունը (Պայմանագրի նախաբանի երկրորդ պարբերություն):

18. Մաքսային ռիսկերը վտանգ են պարունակում մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի եւ ակտերի պահպանման ու պատշաճ իրացման համար: Հանձնաժողովը, որպես Միության մշտապես գործող կարգավորող մարմին, մաքսային կարգավորման ոլորտում մշտադիտարկում իրականացնելիս հետեւում է նման վտանգներն ի հայտ գալուն եւ աստիճանին ու արձագանքում դրանց, որի կապակցությամբ ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 6-րդ կետը նախատեսում է ԵՏՀ իրավասությունը՝ սահմանելու Միության մաքսային տարածքում ռիսկերի ոլորտները ռիսկերի վերլուծության առանձին խմբավորված օբյեկտների նկատմամբ, որոնք պահանջում են մաքսային հսկողության որոշակի

ձեւերի կամ դրանց ամբողջության կիրառում՝ մաքսային վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

19. Դատարանի մեծ կոլեգիան դիմողի առաջին հարցի կապակցությամբ նշում է, որ ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 6-րդ կետը կանոնակարգում է Հանձնաժողովի լիազորությունը ռիսկերի ոլորտների սահմանման վերաբերյալ: Ընդ որում, ռիսկերի կառավարման ոլորտում Հանձնաժողովի եւ անդամ պետությունների մաքսային մարմինների վերոնշյալ իրավասությունների եւ գործառույթների փոխկապակցվածությունը բխում է Մաքսային միության՝ միասնական մաքսային կարգավորման եւ ապրանքների ներքին շուկայի գործունեության հիման վրա գործելու սկզբունքներից (Պայմանագրի 25-րդ հոդվածի 1-ին կետ):

Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում անդամ պետությունների մաքսային մարմինների համար նշում է մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի եւ ակտերի հավանական չպահպանման բնագավառները (մաքսային ռիսկ) եւ այն պայմանները, որոնց դեպքում նման հավանականությունն առաջանում է: Հանձնաժողովի կողմից ռիսկերի ոլորտներ սահմանելը կարող է լինել ապրանքների կատեգորիաների կամ հանգամանքների նկարագրություն, որոնք հիմք են տալիս նախատեսելու մաքսային օրենսդրության խախտման հնարավորությունը, օրինակ՝ ապրանքների որոշակի խմբի ոչ հավաստի հայտարարագրման հնարավորությունը:

Անդամ պետությունների մաքսային մարմիններն իրենց լիազորությունների սահմաններում ապահովում են մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի եւ ակտերի պատշաճ իրացումը:

Ընդ որում, Դատարանի մեծ կոլեգիան ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ Հանձնաժողովի կողմից մաքսային ռիսկերի ոլորտներ սահմանելը չի սահմանափակում մաքսային մարմիններին մաքսային հսկողության իրականացման ներպետական մեխանիզմի իրացման հարցում, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգի գործունեության կարգը, դրա

ռազմավարությունը եւ մարտավարությունը սահմանելու հարցում: Անդամ պետությունների մաքսային մարմինների ազգային առանձնահատկություններին եւ տեխնիկական հնարավորություններին հարմարեցված՝ մաքսային հսկողության ոլորտում ռիսկերին արձագանքման այդ մեխանիզմի իրացման կարգը, ինչպես նշվեց վերելում, դասվում է ազգային իրավակիրառողների բացառիկ իրավասությանը:

Դատարանի մեծ կոլեգիան եզրահանգում է, որ ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 6-րդ կետի նորմատիվ կարգադրագրերի նման մեկնաբանումը լիովին համահունչ է Պայմանագրի նպատակներին եւ սկզբունքներին, ԵԱՏՄ-ում միասնական մաքսային կարգավորման պահանջներին, որոնք նշված են սույն խորհրդատվական եզրակացության 8–11-րդ կետերում, եւ ուղղված է նշված նորմերի օգտակար գործողության հատկությունների բացահայտմանը:

20. Դիմողի երկրորդ հարցի վերաբերյալ Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ Հանձնաժողովը պարտավոր է իր լիազորությունների սահմաններում ապահովել Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերի իրացումը (Հանձնաժողովի մասին հիմնադրույթի 4-րդ կետ), որի համար նա օժտված է նաեւ նորմաստեղծ գործառնություններով:

Պայմանագրի 18-րդ հոդվածի 2-րդ կետի զարգացման նպատակով՝ Հանձնաժողովի մասին հիմնադրույթի 13-րդ կետով նախատեսված է, որ ԵՏՀ-ն իր լիազորությունների շրջանակներում ընդունում է նորմատիվ իրավական բնույթի եւ անդամ պետությունների համար պարտադիր որոշումներ, կազմակերպչակարգադրական բնույթի կարգադրություններ եւ ոչ պարտադիր բնույթի հանձնարարականներ:

Ընդ որում, Հանձնաժողովի մասին հիմնադրույթի 14-րդ կետով սահմանված է, որ որոշումները, կարգադրությունները եւ հանձնարարականներն ընդունվում են Հանձնաժողովի Խորհրդի եւ Հանձնաժողովի Կոլեգիայի կողմից՝ Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով սահմանված լիազորությունների սահմաններում եւ Պայմանագրով ու Բարձրագույն

Եվրասիական տնտեսական խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգով նախատեսված կարգով:

21. ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 6-րդ կետում նախատեսված է Հանձնաժողովի իրավունքը՝ Միության մաքսային տարածքում սահմանելու ռիսկերի այն ոլորտները, որոնց նկատմամբ մաքսային մարմիններին հանձնարարվում է հաստատել ռիսկերի պրոֆիլը եւ կիրառել ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցներ: ԵԱՏՄ ՄՕ 50-րդ գլխի այլ նորմեր չեն պարունակում մատնանշումներ ռիսկերի կառավարման ոլորտում Հանձնաժողովի համապատասխան լիազորություններին: Միեւնույն ժամանակ, ռիսկերի պրոֆիլների մշակումը եւ հաստատումը, ինչպես նշված է վերելում, համաձայն ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 1-ին կետի, վերապահված է անդամ պետությունների մաքսային մարմինների իրավասությանը:

ԵԱՏՄ ՄՕ 376-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային ռիսկը (ռիսկը)՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի եւ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության չպահպանման հավանականությունն է. Հանձնաժողովն օժտված է այն ռիսկերի ոլորտները սահմանելու տեղեկատվական-վերլուծական բնույթի գործառնությով, որոնք ուղղորդում են անդամ պետությունների ազգային մաքսային մարմիններին Միության տնտեսական անվտանգության ապահովման կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու հարցում:

Միեւնույն ժամանակ, Միության իրավունքը՝ ներառյալ ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 6-րդ կետի նորմերը, չի պարունակում ռիսկերի ոլորտների սահմանման վերաբերյալ ընդունվող ակտի տեսակի կոնկրետ մատնանշում: Դրանով պայմանավորված՝ հաշվի առնելով ԵԱՏՄ-ում միասնական մաքսային կարգավորման սկզբունքը (Պայմանագրի 25-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետ), չկան խոչընդոտներ ռիսկերի ոլորտները Հանձնաժողովի որոշման տեսքով ակտի ընդունման միջոցով սահմանելու համար, որոնց առնչությամբ

մաքսային մարմիններին խորհուրդ է տրվում հաստատել ռիսկերի պրոֆիլ եւ կիրառել դրանց նվազեցմանն ուղղված միջոցներ:

22. Դատարանի մեծ կոլեգիան դիմողի երրորդ հարցի վերաբերյալ վերոշարադրյալի հետ մեկտեղ նշում է, որ Պայմանագրի 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Միության իրավունք են կազմում Պայմանագիրը, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը, երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերը, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի եւ հանձնաժողովի որոշումներն ու կարգադրությունները, որոնք ընդունվել են Պայմանագրով ու Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված իրենց լիազորությունների շրջանակներում:

Պայմանագրի 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված է, որ ԵԱՏՄ մարմինների որոշումները եւ կարգադրությունները չպետք է հակասեն Պայմանագրին եւ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին:

Այսպիսով, մաքսային իրավահարաբերությունների կարգավորման ոլորտում՝ տրամադրված լիազորությունների շրջանակներում ընդունված եւ ԵԱՏՄ ՄՕ-ին համապատասխանող Հանձնաժողովի որոշումները ենթակա են կատարման անդամ պետությունների կողմից:

23. Թիվ 69 Որոշմամբ Հանձնաժողովը, սահմանելով ապրանքների առանձին խմբերի նկատմամբ ռիսկերի ոլորտները, խնդրում է ԵԱՏՄ անդամ պետությունների կառավարություններին՝ իր սահմանած ռիսկերի ոլորտների վերաբերյալ ռիսկերի պրոֆիլների հաստատման դեպքում ապահովել լիազորված մարմինների կողմից դրա մասին տեղեկատվության ներկայացումը ԵՏՀ:

Ինչպես նշվեց, ԵԱՏՄ ՄՕ նորմերն առաջնահերթություն ունեն մաքսային կարգավորման ոլորտում՝ Միության իրավունքը կազմող այլ միջազգային պայմանագրերի եւ ակտերի նկատմամբ՝ բացի Պայմանագրից, ինչի կապակցությամբ, ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 1-ին կետի ուժով, ռիսկերի

պրոֆիլների հաստատումը վերապահված է անդամ պետությունների մաքսային մարմինների իրավասությանը, իսկ ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ռիսկերի պրոֆիլներում պարունակվող տեղեկատվությունը գաղտնի է եւ ենթակա չէ հրապարակման՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող դեպքերի:

Սույն խորհրդատվական եզրակացության 18–22-րդ կետերում շարադրվածն ամբողջության մեջ, ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 6-րդ կետում կիրառված «մաքսային մարմիններին խորհուրդ է տրվում հաստատել ռիսկերի պրոֆիլ» ձեւակերպման տառացի ընկալումը թույլ են տալիս Դատարանի մեծ կոլեգիային արձանագրել անդամ պետությունների հայեցողությունը ռիսկերի կառավարման համակարգի գործընթացների ապահովման հարցերում:

Թիվ 69 Որոշման մեջ պարունակվում են դրույթներ՝ ուղղված Հանձնաժողովի լիազորությունների իրացմանը, որոնք ընդհանուր են ըստ առարկայի, բայց տարբեր են ըստ իշխանական ուղղվածության եւ ծավալի, որոնց իմպերատիվ բնույթը չի կարող տարածվել այն ոլորտի վրա, որը վերապահված է անդամ պետությունների բացառիկ իրավասությանը: Այսպիսով, թիվ 69 Որոշումը ռիսկերի ոլորտների սահմանման մասով ունի նորմատիվ իրավական բնույթ, մինչդեռ ռիսկերի պրոֆիլի հաստատման մասով անդամ պետությունների համար չի պարունակում իմպերատիվ կարգադրագրեր:

24. Մեծ կոլեգիան շարադրվածի հիման վրա տրամադրում է հետեւյալ պարզաբանումը՝

24.1. ԵԱՏՄ ՄՕ 377-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովն օժտված է ռիսկերի ոլորտները նորմատիվ իրավական բնույթ կրող ակտերի ընդունման միջոցով սահմանելու լիազորությամբ: Ընդ որում, ռիսկերի պրոֆիլների հաստատումը վերապահված է Միության անդամ պետությունների բացառիկ իրավասությանը:

24.2. Հաշվի առնելով ԵԱՏՄ-ում միասնական մաքսային կարգավորման սկզբունքը՝ չկան խոչընդոտներ ռիսկերի ոլորտները Հանձնաժողովի որոշման

ձեռով ակտի ընդունման միջոցով սահմանելու համար:

24.3. Թիվ 69 Որոշումը ռիսկերի ոլորտների սահմանման մասով ունի նորմատիվ իրավական բնույթ, մինչդեռ ռիսկերի պրոֆիլների հաստատման մասով անդամ պետությունների համար չի պարունակում իմպերատիվ կարգադրագրեր:

IV. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին:

Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝

Ա.Ա. Դրոնով

Դատավորներ՝

Է.Վ. Հայրիյան

Դ.Պ. Ալեքսանդրով

Կ.Կ. Ջունուշյան

Ա.Ա. Զաքարյա

Ե.Ժ. Իսմայիլով

Մ.Տ. Կայիպով

Ա.Բ. Կիշկեմբաև

Ն.Վ. Պավլովա

Ա.Գ. Թունյան